

# կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

# Corporate Social Responsibility

# 2012

Հատոր 6
Edition 6

VIVACELL MTS

ՀՏԴ 654
ԳՄԴ 32.882
Վ669

Վ669 ՎիվաՍել–ՄՏՍ–ը՝ Հայաստանին
Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն
– Եր.: «Ղ–Տելեկոմ» ՓԲԸ, 2012
Մաս 6. – 108 էջ :

ՀՏԴ 654
ԳՄԴ 32.882

**ISBN 978–99941–2–763–4**
© «Ղ–Տելեկոմ» ՓԲԸ, 2012

VIVACELL MTS



**Հարգելի՛ ընթերցող,**

Հայկական ավանդապատումներից մեկն ասում է, թե երբ երկիր ստանալու հերթը հասավ հայերին, մնացել էր միայն մի չոր ու քարքարոտ հողակտոր, քանզի Աստված բերրի հողերն այլ ժողովուրդների էր բաժանել: Եվ հայը, ստանալով իր բաժին երկիրը, մաքրում է հողը քարից ու ժայռից և արյամբ ու քրտինքով ամայի երկիրը շենացնում է ու դարձնում ծաղկուն պարտեզ: Նույն կերպ և պատմության ընթացքում` հայը ջանք չի խնայել պաշտպանելու ու պահպանելու իր քարքարոտ հողակտորը:

Ժամանակները փոխվել են և քչերս ենք այսօր հավատում լեգենդների: Բայց և այնպես, ցանկացած հորինված պատմության մեջ ճշմարտության հատիկ կա. այսօր հայության առաջ ծառացած խնդիրները նման են նրանց, որոնք անցած-գնացած օրերում հաղթահարել են առասպելական հայերը: Այսօր էլ Հայաստանը մեր խիզախումների կարիքն ունի, այսօր էլ մեզնից յուրաքանչյուրը պետք է ամեն օր, ամեն ժամ անձնվիրաբար աշխատի, որպեսզի վերագտնենք ավետյաց երկիրը:

ՎիվաՍել-ՄՏՍ-ի որդեգրած Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ռազմավարությունը ուղղված է դրան: Մենք հավատում ենք, որ համաքաղաքացիների, հայրենակիցների, հասարակության և երկրի հանդեպ պատասխանատվությունը յուրաքանչյուրիս բարօրության և ապագայի մեջ լավագույն ներդրում է:

Ձեռք ձեռքի տված` հանուն ընդհանուր գործի, եկեք ստանձնենք այս պարտավորությունը և առերեսենք մարտահրավերները, եկեք կամք և ուժ գտնենք մեր մեջ` անցնելու դեպի մեր երազանքներում փայփայած Հայաստան երկրի կայուն բարգավաճումն ու աճը տանող ուղին:

Այս հատորում Ձեզ ենք ներկայացնում 2012 թվականին իրականացրած ծրագրերը: Մեզ շատ բաներ են ուժ ու կորով տվել դրանք իրագործելիս և մենք հույս ունենք այդ հավատը փոխանցելու նաև Ձեզ:

**ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն**
**ՌԱԼՖ ՅԻՐԻԿՅԱՆ**

**Dear reader,**

The old Armenian legend says when it came to Armenians to get their share of land, there was only an arid rocky lot left, for the God had already given the fertile lands to other peoples. But the Armenians took the risk and faced the challenge: they removed all the rocks and the stones, and by sweat and by blood, they turned the barren land into a blooming orchard. And throughout history the Armenians toiled and endured hardships, and fought to defend that rocky piece of earth.

The times have changed and few of us believe in legends. But there is a seed of truth in every invented story, for the challenges that the modern Armenians face are much like the ones their imaginary ancestors overcame in those past and gone days: we have a country that needs our endeavors and a relentless humble work every single day from each and every one of us, to regain the promised land.

VivaCell-MTS' Corporate Social Responsibility strategy is one such effort. We believe that the feeling of responsibility for one's co-citizens, compatriots, society, and the country is a long-term investment in everyone's well-being and future.

Hand in hand for a common cause, let us take the risk and face the challenge, let us find the will and the power to take the path to a long-term prosperity and growth of the cherished land called Armenia.

We meet you again this year to share with you the achievements in 2012. A lot has inspired us and we hope that we can inspire you, too.

**VivaCell-MTS General Manager**
**RALPH YIRIKIAN**

## Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ

ՏՏ ոլորտում համաշխարհային ներդրման համար 22 Նախագահի մրցանակի հովանավորություն

Աջակցություն՝ միկրոէլեկտրոնիկայի ամենամյա միջազգային օլիմպիադային

«ՏՏ ոլորտում լավագույն մենեջեր» մրցանակի հովանավորություն

Հայաստանի ռոբոտների բաց առաջնության հովանավորություն

Մայքրոսոֆթի՝ «Նորարար ուսուցիչներ» ֆորումի հովանավորություն

## Կրթություն

Բաց դռների օրեր դպրոցականների համար՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ում

Հայաստանյան բուհերի՝ ավելի քան 250 ուսանողի պրակտիկայի կազմակերպում ՎիվաՍել-ՄՏՍ-ում

Հայաստանյան բուհերում 80 հրավիրյալ դասախոսությունների կազմակերպում

Հայաստանյան բուհերի՝ ավելի քան 180 ուսանողի համար մասնագիտական դպրոցի կազմակերպում ՎիվաՍել-ՄՏՍ-ում

Համագործակցություն հայաստանյան 37 համալսարանի հետ

Համագործակցություն «Օրրան» բարեգործական ՀԿ հետ

Աջակցություն՝ Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում կապի միջոցների, միկրոէլեկտրոնային սխեմաների և համակարգերի ամբիոնում լաբորատորիայի ստեղծմանը

Հայաստանյան բուհերի՝ 200 ուսանողի կրթաթոշակի տրամադրում

Հայաստանում ֆրանսիական համալսարանում Տուրիզմի և մշակութաբանության մագիստրատուրայի հովանավորություն

Գործընկերություն Dasaran.am կրթական համակարգի հետ

Համակարգչային լսարաններ՝ Հայաստանի 30 բուհում

«Պաշարների շտեմարան» վեբ-կայքի հովանավորություն

## Information and Communication Technologies

Sponsorship of the Global IT Award of the President of Armenia for Outstanding Contribution to Humanity through IT

Support to the Annual Microelectronics International Olympiad

Sponsorship of the Best IT Manager Award

Sponsorship of the Armenian Robots Open Championship

Sponsorship of Microsoft Innovative Educators' Forum

## Education

Open Doors days for schoolchildren at VivaCell-MTS

Organization of internship of more than 250 students from universities of Armenia at VivaCell-MTS

Organization of 80 guest lectures at the universities of Armenia

Organization of vocational schools for more than 180 students at VivaCell-MTS

Cooperation with 37 universities in Armenia

Partnership with Orran benevolent NGO

Support in equipping Communication Means, Microelectronics Circuit and Systems lab at the European Regional Educational Academy

Support with tuition fee to 200 students of universities in Armenia

Sponsorship of Tourism and Cultural Studies Master's Program at the French University in Armenia

Partnership with Dasaran.am learning project

Computer labs in 30 universities of Armenia

Sponsorship of the Database for Digital Resources website

Sponsorship of the Schools Rating and Classification System project

Sponsorship of the Best Student national contest

Համալսարանական հաստատությունների վարկանիշային դասակարգման համակարգի մշակման ծրագրի հովանավորություն

«Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթի հովանավորություն

22 բուհերի հաշվետվողականությունը և նրանց գործունեության թափանցիկությունն ապահովող բուհերի դասակարգման և աստիճանակարգման ծրագրի հովանավորություն

«Սբ Էջմիածինը՝ գրատպության կենտրոն» գիրք-ալբոմի հրատարակման հովանավորություն

Հայաստանցի ուսանողների՝ ուսման կրթաթոշակի ապահովման նպատակով «Լույս» հիմնադրամի հովանավորություն

## Առողջապահություն

Համագործակցություն «BirthLink» ՀԿ հետ

Աջակցություն աուտիզմով տառապող երեխաների կրթավճարի ապահովմանը՝ երեխաների զարգացման հայաստանյան կենտրոնի հետ համատեղ

Աջակցություն՝ «Ոսկրածուծի դոնորների հայկական ռեեստր» բարեգործական հիմնադրամին

«Mobile Health» ծրագրի հովանավորություն

Աջակցություն՝ 10-ամյա Էդուարդ Պողոսյանին

## Մշակույթ

«Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի հովանավորություն

«Ազգային պատկերասրահ» միջազգային երաժշտական փառատոնի հովանավորություն

Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի հովանավորություն

Գյումրիի «Վերածնունդ» միջազգային երաժշտական փառատոնի հովանավորություն

«Նոր անուններ» փառատոնի հովանավորություն

«Արս լունգա» դուետի՝ հայ կոմպոզիտորների գործերի

Sponsorship of the System for Classification, Grading, Reporting and Transparency in Universities project

Sponsorship of Holy Echmiatsin a Publishing Center book publication

Sponsorship of the Luys foundation to support providing scholarships for Armenian students

## Healthcare

Partnership with BirthLink NGO

Support in covering tuition of children suffering autism in partnership with the Armenian International Child Development Center

Support to the Armenian Bone Marrow Donor Registry Charitable Trust

Support in equipping emergency cars in Vanadzor and Gyumri

Sponsorship of the Mobile-Health project

Support to 10-year-old Eduard Poghosyan

## Culture

Sponsorship of the Golden Apricot International Film Festival

Sponsorship of the National Gallery International Music Festival

Sponsorship of the State Philharmonic Orchestra of Armenia

Sponsorship of the Renaissance Gyumri International Music Festival

Sponsorship of the New Names Festival

Sponsorship of recording the works by Armenian composers by the Ars Lunga Duo

Sponsorship of the Sayat-Nova Cultural Union

կատարումների ձայնագրման հովանավորություն

«Սայաթ-Նովա» մշակութային միության հովանավորություն

Պատկերապատման միջազգային փառատոնի հովանավորություն

Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի հովանավորություն

«Վերադարձի» դասական երաժշտության փառատոնի հովանավորություն

Հայաստանի պարարվեստի «Բարեկամություն» պետական համույթի հովանավորություն

Կոմիտասի անվան լարային քառյակի հովանավորություն

«Օպերացիա «Նեմեսիս»» ներկայացման բեմադրման հովանավորություն

«Կարինե» օպերետի բեմադրման հովանավորություն

«Անուշ» օպերայի բեմադրման հովանավորություն

Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի հովանավորություն

«Գրքի ուղի» նախագծի հովանավորություն

«I Solisti Veneti» նվագախմբի համերգի հովանավորություն

Աջակցություն՝ պատանի գեղանկարիչ Միքայել Հարությունյանի ցուցահանդեսի կազմակերպմանը

## Շրջակա միջավայրի պաշտպանություն

Մասնակցություն՝ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի նախաձեռնությամբ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տարածքում կազմակերպված ծաղիկների հավաքման միջոցառմանը

Աջակցություն՝ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից Երկրի օրվան նվիրված միջոցառումների կազմակերպմանը

Մասնակցություն՝ Խոսրովի արգելոցին հարակից բուֆերային գոտում ծառատունկին

Sponsorship of the International Comics Festival

Sponsorship of the State Youth Orchestra of Armenia

Sponsorship of the Return Classical Music Festival

Sponsorship of the Barekamutyun State Dance Troupe of Armenia

Sponsorship of the String Quartet after Komitas

Sponsorship of staging the Operation Nemesis

Sponsorship of staging Karine operetta

Sponsorship of staging Anush opera

Sponsorship of the State Academic Choir

Sponsorship of the Via Libri project

Sponsorship of the I Solisti Veneti concert

Support in organizing exhibition of paitings by Mikayel Harutyunyan

## Environmental Protection

Participation in flower gathering event on the territory of the Armenian Genocide Museum-Institute organized by the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets

Support in organization of Earth Day celebration by the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets

Participation in tree planting event in the buffer zone, adjacent to the Khosrov Reserve

Support in organization of Painting Day by the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets

Աջակցություն՝ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի նախաձեռնությամբ նկարչական օրվա կազմակերպմանը

Աջակցություն՝ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի նախաձեռնությամբ միջազգային բնապահպանական դիմակահանդես-շքերթի կազմակերպմանը

Support in organization of the International Environmental Carnival by the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets

## Սպորտ

Հայաստանի շախմատի ֆեդերացիայի հովանավորություն

Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականների հովանավորություն

«Ուլիս» ֆուտբոլային ակումբի հովանավորություն

Հայաստանյան լրագրողների միջև սեղանի թենիսի մրցաշարի հովանավորություն

Red Bull X Fighters Jams մոտոմրցույթի հովանավորություն

## Sport

Sponsorship of Chess Federation of Armenia

Sponsorship of football national teams of Armenia

Sponsorship of the Ulysses football club

Sponsorship of the table tennis tournament among the Armenian journalists

Sponsorship of the Red Bull X Fighters Jams motocontest

## Այլ

«Հայաստան» համահայկական հիմնադրամի ամենամյա հեռուստամարաթոնի հովանավորություն

Աջակցություն՝ Արտաշատի Սբ Հովհաննես եկեղեցու վերակազնմանը

Աջակցություն՝ «Ունիսոն» ՀԿ

Աջակցություն՝ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտին գրքերի ձեռքբերման հարցում

Արմավիրի մարզում հակակարկտային կայանների տեղադրման հովանավորություն

«Հայաստանի մանուկներ» հիմնադրամի կողմից Արագածոտնի Քարակերտ համայնքի N 1 դպրոցի դասասենյակի վերանորոգման հովանավորություն

«Դեպի Հայք» հիմնադրամի հովանավորություն

JAWS ծրագրով համակարգչային գրագիտության ապահովման հովանավորություն՝ տեսողության խնդիրներ ունեցողների համար

Հայաստանի պատմական հուշարձանների տարածքում տեսակրպակների տեղադրման հովանավորություն

ՎիվաՍել-ՄՏՍ-ը՝ սիրիահայերին

## Other

Sponsorship of Hayastan All-Armenian Fund annual telethon

Support in renovation of St Hovhannes church in Artashat

Support of the Unison NGO

Support the Armenian Genocide Museum-Institute in obtaining books

Sponsorship of installation of anti-hail systems in Armavir region

Sponsorship of renovation of a classroom in school N 1, Karakert community, Aragatsotn, by the Children of Armenia Fund

Sponsorship of the BirthRight Armenia Foundation

Sponsorship of the production of computer literacy software for blind people by JAWS project

Sponsorship of installation of videokiosks on the territory of historical monuments in Armenia

VivaCell-MTS supports Syria Armenians

# Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ

## Information and Communication Technologies









## «ՏՏ ոլորտում լավագույն մենեջեր» մրցանակի հովանավորություն

ՎիվաՍել–ՄՏՍ–ը 2012–ին դարձյալ ստանձնեց 22 վարչապետի բարձր հովանու ներքո անցկացվող ՏՏ ոլորտի «Լավագույն մենեջեր» ամենամյա մրցանակաբաշխության գլխավոր հովանավորությունը: Մրցանակաբաշխության կազմակերպիչը «Սինոփսիս Արմենիա» ընկերությունն էր: Ավելի քան տասը տարվա փորձ ունեցող կառավարիչներից երեքը՝ հնարավորություն ստացան կատարելագործելու ղեկավարի իրենց հմտությունները աշխարհում բարձր վարկանիշ ունեցող Սթենֆորդի համալսարանում:

## Sponsorship of the Best IT Manager Award

Once again VivaCell–MTS became the general sponsor of the Best IT Manager Award organized by the Synopsis Armenia, which was held under the high patronage of the Prime Minister of the Republic of Armenia. Three managers with more than 10 years of work experience gained opportunity to improve their professional skills at the Stanford, one of the highest ranking universities of the world.

## Աջակցություն՝ միկրոէլոկտրոնիկայի ամենամյա միջազգային օլիմպիադային

ՎիվաՍել–ՄՏՍ–ը աջակցեց միկրոէլեկտրոնիկայի հայաստանյան ամենամյա յոթերորդ միջազգային օլիմպիադային, որի կազմակերպիչը «Սինոփսիս Արմենիա» ընկերությունն էր: Միջոցառմանը մասնակցեցին տասնչորս երկրից ժամանած մինչև երեսուն տարեկան ճարտարագետներ: Օլիմպիադայի 418 մասնակցից 191–ը հայաստանյան բուհերի և ՏՏ ընկերությունների, իսկ 227–ը՝ միջազգային համալսարանների և կազմակերպությունների ներկայացուցիչներ էին:

## Support to the Annual Microelectronics International Olympiad

VivaCell–MTS supported the 7th Annual Microelectronics International Olympiad organized by the Synopsis Armenia. The event hosted engineers aged below 30 from 14 countries. 191 of the 418 participants represented universities and IT companies of Armenia; the 227 of them came from foreign educational institutions and organizations.






VIVA MTS
SYNOPSYS



## ՏՏ ոլորտում համաշխարհային ներդրման համար ՀՀ Նախագահի մրցանակի հովանավորություն

Մտավոր ներուժը դիտարկելով որպես երկրի մրցակցային կարևոր առավելություններից, ՎիվաՍել–ՄՏՍ–ը կրկին ստանձնեց ՏՏ ոլորտում համաշխարհային ներդրման համար Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի գլխավոր հովանավորությունը: «Սինոփսիս Արմենիա» ընկերության նախաձեռնությամբ և ՎիվաՍել–ՄՏՍ–ի հովանավորությամբ 2009 թվականին ստեղծված մրցանակը յուրաքանչյուր տարի շնորհվում է համաշխարհային ՏՏ ոլորտում բացառիկ ներդրում կատարած հեղինակավոր անհատի: 2012 թվականին մրցանակակիր դարձավ միկրոպրոցեսորի հայտնագործող Ֆեդերիկո Ֆաջինը:

## Sponsorship of the Global IT Award of the President of Armenia for Outstanding Contribution to Humanity through IT

Viewing the intellectual potential as one of the competitive equities of the country, VivaCell–MTS became the general sponsor of Global IT Award of the President of Armenia for Outstanding Contribution to Humanity through IT. The award, founded upon Synopsys Armenia initiative and VivaCell–MTS sponsorship in 2009, is given to people having outstanding contributions in the sphere of information technologies. The winner of the 2012 award was Federico Faggin, the inventor of microprocessors.

## Հայաստանի՝ ռոբոտների բաց առաջնության հովանավորություն

Հայաստանի հեռահաղորդակցության առաջատար օպերատորը 2012–ին կրկին դարձավ «Արմռոբոտիքսի» հովանավոր: Գծին հետևող, տարբերակող, ական փնտրող ռոբոտների, ինչպես նաև անօդաչու թռչող սարքերի ստեղծման և տեխնիկական հնարավորությունները բացահայտող մրցույթներում մասնակից–պատանիներից շատերն արձանագրեցին իրենց առաջին հաջողությունները: Առաջնության կազմակերպիչը Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունն էր:

## Sponsorship of the Armenian Robots Open Championship

Armenia’s leading telecommunications operator became the general sponsor of the Armenian Robots Open Championship. Many of the young people competing in creating and improving the technical performance of line followers and UAV, registered their first victories. The organizer of the championship was the Union of Information Technologies Enterprises.





# Կրթություն

## Education






DASARAN
MTS



## Գործընկերություն՝ Dasaran.am կրթական համակարգի հետ

ՎիվաՍել–ՄՏՍ–ը դարձավ Dasaran.am միասնական կրթական էլեկտրոնային համակարգի գլխավոր գործընկերը: 22 ԿԳ նախարարության, Dasaran.am կրթական ծրագրի և ՎիվաՍել–ՄՏՍ–ի միջև մեկ տարի առաջ ստորագրված համաձայնագրի արդյունքում, ստեղծվեց աշակերտների, ծնողների և ուսուցիչների կապն ապահովող համապարփակ միջավայր: Ծրագիրն անվճար հիմունքներով հասանելի է հանրակրթական դպրոցներին:

## Partnership with Dasaran.am learning system

VivaCell–MTS became the general partner of the Dasaran.am electronic learning system created in accord with the agreement signed a year ago by the Ministry of Educaiton and Science of Armenia, Dasaran.am educational project and VivaCell–MTS to provide a common space for schoolchildren, parents and teachers. The program is free of charge for the schools.

## Համագործակցություն՝ Հայաստանի բուհերի հետ

Հայաստանում գործարար մշակույթի նոր մոդել առաջարկած ՎիվաՍել–ՄՏՍ–ի գործունեությունը շարունակում է մնալ տարբեր լսարանների ուշադրության կենտրոնում: Ընկերության հետ համագործակցող 37 բուհի ավելի քան 250 ուսանող հնարավորություն ստացավ մասնակցելու համատեղ կազմակերպված դասախոսությունների՝ տեսական գիտելիքները համադրելու գործնական հմտությունների հետ և ծանոթանալու ընկերության կառավարման մշակույթին:

## Cooperation with the universities in Armenia

VivaCell–MTS model of business culture remains within the focus of public attention. More than 250 students from 37 universities of Armenia cooperating with the Company got an opportunity to attend jointly organized lectures to complement theory with practice and familiarize themselves with the Company’s culture of management.












## Բաց դռների օրեր` ՎիվաՍել–ՄՏՍ–ում

Ընկերության` հաջողության հասնելու բանաձևը հետաքրքիր է մասնագիտության ընտրության առաջ կանգնած երիտասարդներին: Ընկերության գլխամասային մասնաշենքում կազմակերպված բաց դասերը Հայաստանի և արտերկրի ավելի քան 450 աշակերտի հնարավորություն տվեցին տեղում ծանոթանալու ՎիվաՍել–ՄՏՍ–ի բիզնես կառավարման մոդելին և գնահատելու կայուն, մրցունակ ձեռքբերումների կարևորությունը:

## Open Doors days at VivaCell-MTS

Young people facing the choice of profession show significant interest in the Company's formula of success. The open classes organized at the headquarters of the Company gave more than 450 school-aged young people from Armenia and abroad a chance to familiarize with VivaCell-MTS model of management and feel the importance of stable and competitive achievements.

## Համակարգչային լսարաններ՝ Հայաստանի բուհերում

ՎիվաՍել–ՄՏՍ–ն աջակցում է իր հետ համագործակցող բուհերին՝ Հայաստանում առավել արդիական կրթություն ապահովելու հարցում: Այս տարի բուհերում ստեղծվել են ինտերնետ հասանելիությամբ համակարգչային լսարաններ, սկսել են գործել նաև Wi–Fi անկյուններ: Դասախոսի աշխատանքի և նյութի մատուցման արդյունավետությունը բարձրացնելու համար նաև ձեռք են բերվել լուսարձակով ինտերակտիվ գրատախտակներ: Համալսարաններից մի քանիսում տեղադրվել են տեսակոնֆերանսների կազմակերպման սարքեր:

## Computer labs in universities of Armenia

VivaCell–MTS supports partner–universities in providing education that complies with the modern standards of vocational training. This year the universities were equipped with Internet labs, as well as Wi–Fi corners. To increase the efficiency of instructors' work and the learning, auditoriums at the universities were equipped with interactive smartboards. Some of the universities were also provided with video conference equipment.






MTS



## Հայաստանի բուհերի 200 ուսանողի կրթաթոշակի տրամադրում

ՎիվաՍել–ՄՏՍ–ն այս տարի ևս աջակցության ձեռք մեկնեց սոցիալապես խոցելի խմբում հայտնված 200 ուսանողի: Այս ծրագիրն ուղղված է կրթությունը բոլորին հասանելի դարձնելուն: Հատուկ կարիքներ ունեցող, ծնողազուրկ և անապահով ընտանիքներում ապրող ուսանողները ՎիվաՍել–ՄՏՍ–ի պատրաստակամ աջակցությունից կօգտվեն մինչև ուսման ավարտը:

## Support with tuition fee to 200 students of universities in Armenia

VivaCell–MTS supported 200 students from socially vulnerable groups. The program aims at making education available to everyone. The readily provided support to students from parentless, socially unprotected and needy families will cover fully their tuition fees.

## Համագործակցություն «Օրրան» բարեգործական ՀԿ հետ

Այս տարի Վանաձորում շահագործման հանձնվեց «Օրրան–Գրիգորյան» նորակառույց եռահարկ շենքը: Կենտրոնը հոգում է սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների, ինչպես նաև միայնակ ու անօգնական տարեցների կարիքները: Այն իրականություն դարձավ ՎիվաՍել–ՄՏՍ–ի, բրիտանացի բարերար Գրիգոր Գրիգորյանի, Իտալիայի ԱԳՆ դրամաշնորհային ծրագրի հաղթող CIPS ՀԿ–ի և մի շարք անհատ բարերարների աջակցությամբ: ՎիվաՍել–ՄՏՍ–ը մասնակցեց նաև «Օրրանի» ամենամյա բարեգործական ընթրիքին, որի ընթացքում կատարեց հանգանակություն, ինչպես նաև բնակարան նվիրեց կարիքավոր ընտանիքի:

## Partnership with Orran benevolent NGO

This year Vanadzor got a three–storied building for the Orran–Krikorian center, which provides for the needs of children from socially vulnerable families as well as lonely and helpless seniors. The construction of the facilities was made possible with the support of VivaCell–MTS, British–Armenian benefactor Grigor Krikorian, CIPS NGO, the winner of a grant program held by the Ministry of Foreign Affairs of Italy, as well as a number of individual donors. VivaCell–MTS also took part in a donation during the Orran annual charity dinner. One of the beneficiary families received an apartment from the Company.











## Աջակցություն` եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում կապի միջոցների, միկրոէլեկտրոնային սխեմաների և համակարգերի երկրորդ լաբորատորիայի ստեղծմանը

Մեկ տարի առաջ ՎիվաՍել–ՄՏՍ և «Սինոփսիս Արմենիա» ընկերությունները գործնական քայլեր կատարեցին առաջին լաբորատորիան ստեղծելու ուղղությամբ: ՎիվաՍել–ՄՏՍ–ի ֆինանսական աջակցությամբ լաբորատորիայի համար նախատեսված տարածքն այս տարի համապատասխանեցվեց արդի ուսումնական պահանջներին և ապահովվեց համակարգչային տեխնիկայով: Ընկերության ներդրած ֆինանսական միջոցներից են հատկացվում նաև ամբիոնի պրոֆեսորա–դասախոսական կազմի աշխատավարձն ու հավասարեցված այլ վճարները:

## Support in equipping Communication Means, Microelectronics Circuit and Systems lab at the European Regional Educational Academy

A year ago VivaCell–MTS and Synopsys Armenia took measures to create the first laboratory. With the financial support of VivaCell–MTS, the facilities of the laboratory were equipped according to the requirements of the modern education standards, and were provided with computers. The Company’s financial support also covers the salaries and other pays of the faculty.

# Առողջապահություն

## Healthcare













## Համագործակցություն «BirthLink» ՀԿ հետ

ՎիվաՍել–ՄՏՍ–ը և «BirthLink» ՀԿ 2012 թ. ևս շարունակեցին Հայաստանում նորածնային խնամքի պայմանների բարելավմանն ուղղված համատեղ իրականացվող երկարաժամկետ ծրագիրը: Տավուշի, Գեղարքունիքի և Լոռու մարզերի տասը ծննդատներն ու մայրաքաղաքի «Մուրացան» համալսարանական հիվանդանոցը վերազինվեցին նեոնատալ խնամքի բարձրակարգ բուժսարքավորումներով:

## Partnership with BirthLink NGO

In 2012 VivaCell–MTS and BirthLink continued the joint long–term project aimed at imporving neo–natal care conditions in Armenia. Ten maternity hospitals in Tavush, Gegharkunik and Lori regions and the Muratsan university hospital in Yerevan were refurbished with high–quality equipment for neo–natal care.

## Աջակցություն աուտիզմով տառապող երեխաների կրթավճարի ապահովմանը՝ Երեխաների զարգացման հայաստանյան կենտրոնի հետ համատեղ

2008 թվականից ի վեր ՎիվաՍել-ՄՏՍ-ն աջակցում է Երեխաների զարգացման միջազգային կենտրոնին՝ հոգեբանական օտարացման ծայրահեղ ձևի՝ աուտիզմի դեմ արդյունավետ պայքարի հարցում: ՎիվաՍել-ՄՏՍ-ի կատարած ամենամյա ներդրման արդյունքում՝ երեխաները կենտրոն են հաճախում անվճար:

## Support in covering tuition of children suffering autism in partnership with the Armenian International Child Development Center

Beginning 2008 VivaCell-MTS supports International Child Development Center to efficiently fight against autism, one of the most acute types of social alienation. With VivaCell-MTS support the enrollement in the program for children is free of charge.









## Աջակցություն՝ 10–ամյա Էդուարդ Պողոսյանին

ՎիվաՍել–ՄՏՍ–ի հովանավորությամբ արտերկրից Հայաստան բերվեց հինգերորդ սերնդի՝ ականջի իմպլանտ, ինչը կենսուրախ տղային թույլ տվեց լիովին հաղթահարել ի ծնե խլությունը: Էդուարդը հաճախում է հանրակրթական դպրոց և առաջադիմությամբ չի զիջում իր դասարանցիներին: Նա նաև հաճախում է լողի, ֆուտբոլի և նկարչության խմբակներ:

## Support to 10–year–old Eduard Poghosyan

With VivaCell–MTS support 10–year–old Eduard Poghosyan has regained the ability to freely communicate with peers. The Company helped to get a fifth generation hearing–aid implant from abroad that lets the cheerful child to fully overcome the inborn deafness. Eduard goes to a secondary school and is frequently ahead of his classmates. The boy also goes for swimming, football and painting.

## «Mobile-Health» ծրագրի հովանավորություն

«Էրիկսոն» ընկերության անլար տեխնոլոգիաների վրա հիմնված «Mobile-Health» նախագծի փորձնական կլինիկական գործարկումը Հայաստանում մեկնարկեց Նորք-Մարաշի սրտաբանական կենտրոնում: Սա հիվանդին թույլ է տալիս կառավարել ռեսուրսները և ժամանակը և կատարել համապատասխան չափումներ և արդյունքները բջջային ցանցի միջոցով բժշկին փոխանցելով՝ մշտապես գտնվել մասնագետների ուշադրության կենտրոնում: ՎիվաՍել-ՄՏՍ-ը դարձավ ծրագրի գլխավոր հովանավորը:

## Sponsorship of the Mobile-Health project

The pilot clinical testing of the Mobile-Health project based on Ericsson's wireless technologies in Armenia started in the Nork-Marash cardiological center. The online medical control of the patient helps manage time and resources more efficiently and lets the patient make the required measurements and send the results to the doctor via mobile networks remaining within specialists' control. VivaCell-MTS became the general sponsor of the project.




MTS
leading

# Մշակույթ
## Culture









## «Օպերացիա «Նեմեսիս»» ներկայացման բեմադրման հովանավորություն

ՎիվաՍել–ՄՏՍ–ը ստանձնեց «Օպերացիա «Նեմեսիս»» ներկայացման գլխավոր հովանավորությունը: Ռեժիսոր և դերասան Նարեկ Դուրյանի բեմադրած ներկայացման բովանդակությունը հիմնված է հայտնի ֆրանսիացի գիտնականներ Ժերար Շալյանի, Իվ Տեռնոնի, Ժակ Դերոժի աշխատությունների, Սողոմոն Թեհլերյանի դատավարության արձանագրությունների և Պերճ Զեյթունցյանի «Ոտքի՛, դատարանն է գալիս» պիեսի վրա:

## Sponsorship of staging the Operation Nemesis

VivaCell–MTS became the general sponsor of the Operation Nemesis staged by director and actor Narek Duryan. The play is based on the works by renowned French researchers Gerard Chalian, Yves Ternon, and Jacques Deroge, the transcripts of Soghomon Tehlerian's trial and Pertch Zeytuntsyan's play Stand Up, the Court Coming!

## Հայաստանի պարարվեստի «Բարեկամություն» պետական համույթի հովանավորություն

ՎիվաՍել–ՄՏՍ–ը դարձավ «Բարեկամություն» պետական անսամբլի համերգաշրջանի գլխավոր հովանավորը: Վաստակավոր կոլեկտիվը վայելում է և՛ Հայաստանի և՛ արտերկրի հանդիսատեսի համակրանքը արդեն 25 տարի: Խումբն իր կատարումներով այս տարի հանդես է եկել Գերմանիայում, Միացյալ Թագավորությունում, Ռուսաստանում, Ֆրանսիայում, Չինաստանում և այլ երկրներում:

## Sponsorship of the Barekamutyun State Dance Troupe of Armenia

VivaCell–MTS became the general sponsor of the Barekamutyun State Dance Troupe of Armenia. The renowned dancers enjoy the audiences' sympathies in Armenia and equally abroad for more than quarter of century. In 2012 the company toured in Germany, United Kingdom, Russia, France, China and other countries.









## Պատկերապատման միջազգային փառատոնի հովանավորություն

2012-ին ՎիվաՍել-ՄՏՍ-ը դարձավ նաև պատկերապատման միջազգային 3-րդ փառատոնի գլխավոր հովանավորը: Փառատոնը բացվեց «Իմ Հայաստան» գրքի շնորհանդեսով, որում ներկայացված էին քանից ավելի նկարչի պատկերապատումներ: Փառատոնի շրջանակում կազմակերպվեցին վարպետության դասընթացներ, սեմինարներ, մրցույթներ, անիմացիոն ֆիլմերի ցուցադրություններ և մանկական ցուցահանդես-միջոցառումներ:

## Sponsorship of the International Comics Festival

In 2012 VivaCell-MTS became the general sponsor of the 3rd International Comics Festival. The festival opened with the presentation of the book My Armenia that included the works of more than 20 artists. The festival included master classes, seminars, contests, animation film screenings and exhibitions of children works.

## «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի հովանավորություն

ՎիվաՍել-ՄՏՍ-ն ութերորդ տարին ստանձնեց աշխարհի լավագույն փառատոների տասնյակում հայտնված՝ «Ոսկե ծիրան» երևանյան միջազգային կինոփառատոնի գլխավոր հովանավորությունը: Կինոփառատոնը բացվեց Համո Բեկնազարյանի «Շոր և Շորշոր» կատակերգությամբ, իսկ ամփոփվեց Կաննի 65-րդ փառատոնի գլխավոր մրցանակակիր «Սեր» ֆիլմի բացառիկ ցուցադրությամբ: Փառատոնն իրականացվեց Հայաստանի մշակույթի նախարարության աջակցությամբ:

## Sponsorship of the Golden Apricot International Film Festival

